ՀԻՆ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ ՇՆՈՂԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Վ. Վ. ԱՎԵՏՅԱՆ

1972 թ. հունիսից ձեռնարկվեցին Թումանյանի շրջանի Շնող գյուղի մոտ գտնվող Մեծ Ուրթատեղ և Ղարաքոթուկ կոչվող հնավայրերի պեղումները։ Պարզվեց, որ, ինչպես Մեծ Ուրթատեղում, այնպես էլ Ղարաքոթուկում կան դամբարանադաշտեր։ Բացի այդ, Ղարաքոթուկից դեպի հարավ-արևմուտք, 5 կմ հեռավորության վրա, Գոռեր, Ղաշխաթալա, Կարմիր գյուղ, Միրզաքար վայրերում հայտնաբերվեցին բազմաթիվ դամբարաններ։ Դրանց զգալի մասը 12, ինչպես նաև 4,5—6 մ տրամագծով կրոմլեխներ (շրջանաքարային դամբարաններ) են։ Գոռեր և Ղաշխաթալա կոչվող վայրերում նկատվեցին նաև փոքր դամբարանաբլուրներ։ Դամբարանների մի մասի վերգետնյա կլոր քարալից շրջանները լավ են պահպանվել, իսկ մյուսներինը՝ հազիվ նկատելի են։

Ղարաքոթուկի դամբարանադաշտը բաղկացած է (ոչ լրիվ տվյալներով) շուրջ 200 մեծ և փոքր դամբարաններից, իսկ Մեծ Ուրթատեղինը՝ 25։ Մեծ Ուրթատեղում դամբարանները հազիվ են նկատվում։ Դրանցից 23-ը կրոմլեխներ են, իսկ 2-ը՝ դամբարանաբլուրներ։ Կրոմլեխների արտաքին քարալից շրջանի տրամագծերը 10—12 մ են։ Դամբարանաբլուրներից մեկի տրամագիծը 22, իսկ մյուսինը՝ 18 մ է։ Վերջիններս գետնի երեսից բարձր են մոտ 1 մ և գտնվում են Մեծ Ուրթատեղ կոչվող սարահարթի կենտրոնի ուռուցիկ գոգավորության վրա՝ դամբարանադաշտի արևելյան ծայրում։

Գետնի երեսին երևացող կրոմլեխների կլոր շրջանաքարերը, բացի մեկից, որն ըստ երևույթին շատ վաղուց քանդվել և ավերվել է, տեղում են։ Այս դամբարանադաշտի կողոպտված դամբարանից բացի պեղվեց նաև 22 մ տրամագիծ ունեցող մի դամբարանաբլուր։

Ղարաքոթուկի դամբարանադաշտը Մեծ Ուրթատեղից հեռու է 400 մ և գրավում է 10 հա տարածություն։ Այնտեղ կան ինչպես կրոմլեխներ, այնպես էլ փոքր դամբարանաբլուրներ ու քարակարկասային դամբարաններ։ Պեղված դամբարաններից 8-ը կրոմլեխներ են, 2-ը՝ դամբարանաբլուրներ, որոնցից մեկի տրամագիծը 12 մ էր, մյուսինը՝ 22։ Կրոմլեխների արտաքին քարալից շրջանի տրամագծերը 12 մ էին, սակայն դամբանափոսի չափսերը տարբեր էին։

Թեև Թումանյանի շրջանի (նախկին Ալավերդու) հին հուշարձանների ուսումնասիրությունը սկսվել է ավելի քան 100 տարի առաջ, սակայն ուսումնասիրողներից ոչ մեկը չի անդրադարձել Շնողի տերիտորիային։

1871 թ. Ա. Երիցյանը Որնակ (այժմ Ակներ) գյուղի մոտ բացել է 23 դամբարան, որոնցում հայտնաբերված նյութերը պատկանել են բրոնզի և երկաթի դարերի տարբեր ժամանակաշրջաններին[1]։ 1887—1888 թթ. Ժ. Մորդանը 1000-ից ավելի դամբարաններ է պեղել Շեյթան-դաղում՝ Ղարա-ղալա լեռան գագաթին, Ախթալայում, Ուչքիլիսայում, Մուսի-էրխում, Ղարադաղում (Սա-

[1] «Кавказ», 1871, № 3:

դախլո գյուղի մոտ) և Ջալալօղլիում[2]։ Ժ. Մորգանի հայտնաբերած նյութերը գլխավորապես վերաբերում են ուշ բրոնզի դարին և երկաթի լայն յուրացման ժամանակաշրջանին՝ մեծ մասամբ մ. թ. ա. VII—VI դդ.։

1893 թ. Ոբնակում պեղումներ է կատարել Ն. Մառը՝ բացելով մեծ թվով քարարկղյա դամբարաններ, որոնցում նա հայտնաբերել է երկաթե սրեր, վաղ շրջանի սկյութական տիպի նետասլաքներ, գուրզեր, բրոնզե զարդեր, հարուստ խեցեղեն և այլն[3]։ 1894 թ. Ոբնակում պեղումներ է կատարել նաև Ե. Տակաիշվիլին[4], որի հայտնաբերած նյութերը վերաբերում են երկաթի յուրացման սկզբնական շրջանին։ 1951 թ. Ղաչաղան գյուղի տարածքում պեղումներ է կատարել Հ. Մնացականյանը[5], որի հայտնաբերած նյութերը վերաբերում են ուշ բրոնզի և երկաթի դարի սկզբներին։ Այնուհետև Թումանյանի շրջանում հնագիտական պեղումներ չեն կատարվել, սակայն հողային աշխատանքների ժամանակ գտնվել են բազմաթիվ արժեքավոր նյութեր, որոնք պահվում են Թումանյան բանավանի և Շնողի դպրոցական թանգարաններում։

Սույն հոդվածում տալիս ենք 1972 թ. պեղված դամբարանների նկարագրությունը։ Նախնական հետազոտությունների տվյալներով հայտնաբերված նյութերը, կարծում ենք, կարելի է թվագրել մ. թ. ա. XIV—VII դդ.։

№ 1 դամբարանի (կրոմլեխ) արտաքին քարալից շրջանի տրամագիծը 12 մ է։ Շրջան կազմող բոլոր քարերը տեղում էին։ Դրանք մեծ կամ միջին մեծության էին՝ կիսով չափ թաղված հողի մեջ։ Շրջանի կենտրոնում երևում էր մեկ երկարավուն քար։ Ծածկի քարերը հինգն էին՝ գցված փոսի լայնքով։ Դամբարանի լայնությունը՝ 1,1, խորությունը՝ 1—1,2, երկարությունը՝ 2,3 մ էր։ Պատերը շարված էին մեծ քարերով, որոնց ծայրերին ընդերկայնակի դրված էին 1, արևելյան կողմից՝ 3, իսկ ճակատներին՝ մեկական մեծ և փոքր քարեր։

Դամբանափոսում կային 5 կավամաններ, որոնցից մեկը հաստ պատերով, գորշակարմիր կավից (պատրաստված ձեռքով), շուրթերը դեպի ետ կլորացված, 3 ընդլայնսկի ակոսագծերով, լայն իրանով մեծ կճուճ է, որի իրանն աստիճանաբար նեղանում է դեպի կիսակլոր, 12 սմ տրամագծով հատակը։ Այն դրված էր դամբարանի հյուսիսային ճակատի արևելյան անկյունում (նկ. 1ա) և հավանաբար օգտագործվել է սննդամթերք պահելու համար։

Երկրորդ կավամանը դրված էր դամբանափոսի հյուսիսային ճակատի արևմտյան անկյունում։ Շուրթերը հաստ են, փոքր-ինչ կլորացված։ Այն պատրաստված է գորշ-կարմրավուն կավից, ունի սանրատամ տերևանման զարդ (նկ. 1բ)։

Երրորդ կավամանը գորշ կարմրավուն, հաստ պատերով, 3 հաստ ակոսագծերով, լայնաբերան կճուճ է։ Կճուճի իրանը դբսից մրակալված է։ Հավանաբար այն օգտագործվել է կերակուր պատրաստելու համար (նկ. 1գ)։

Մյուս կավամանները կարմրավուն կավից պատրաստված քրեղաններ են՝ դրանցից մեկն ունի անկանոն ակոսագծեր, իսկ մյուսը՝ գորշակարմիր է (նկ. 1 դ, ե)։ Դամբարանում կային հողի հետ խառը փայտածխի մնացորդներ։

---

[2] J. de Morgan, Mission scientifique au Caucase, Paris, 1899, էջ 1։

[3] Н. Я. Марр, ОАК за 1894, էջ 14—16:

[4] Е. С. Такаишвили, ОАК за 1894; Дневник Е. С. Такаишвили, Архив ИА СССР, д. № 17.

[5] А. О. Мнацаканян, Археологические находки в селе Басаргечар (КСИИМК, вып. 60, էջ 39—44):



Նկ. 1. Նկ. 2.

№ 2 դամբարանը (կրոմլեխ) արտաքնապես նման էր դամբարանարլրի, որի բարձրությունը վերգետնյա մասում 80 սմ էր։ Դամբարանաբլրի տրամագիծն էր 12 մ։ Ծածկի քարերը դրված էին գամբանափոսի լայնությամբ։ Դրանք հեռացնելուց հետո բացվեցին դամբարանի եզրագծերը։ Դամբարանն ուներ 2,3 մ երկարություն, 1,1 մ լայնություն։ 70 սմ խորության վրա բացվեցին 14 կավամաններ, որոնցից մի քանիսը թեքվել էին կողքի և խիստ քայքայվել կամ ջարդվել (նկ. 2)։ Ինչպես այս, այնպես էլ պեղված մյուս դամբարաններում թաղում կատարելուց հետո դամբանափոսը հողով չի լցվել։ Այն լցվել է հետագայում՝ անձրևաջրերի հետ ծածկի քարերի արանքից դամբարան ներթափանցած հողով։ Դրա հետևանքով կավամանները շրջվել են կողքի և մասամբ ջարդվել կամ ճմկել։ Պեղված դամբարաններում նյութի վատթար վիճակի և փայտե ու ոսկրե նյութերի բացակայության պատճառն է դամբանափոսը վավահողի մեջ կտրված լինելը։ Դրան նպաստել է նաև կավանոթների մի մասի անբավարար թրծվածությունը։ № 2 դամբարանում բացված կավանոթներից հատկապես ուշագրավ էին դամբանափոսի արևմտյան պատի մոտ երկու խմբով դրվածները։ Ամեն խմբում կային 3 կավանոթներ՝ յուրաքանչյուրում մեկական ինքնատիպ ու խիստ ուշագրավ ամաններ, որոնց պայմանականորեն անվանում ենք «հրաբորբոք վազաներ»։ Դրանք պատրաստված են կարմիր աղյուսագույն կավից և ունեն կլոր լայնաբերան փռված վազաների տեսք, որոնց սափորաթասում արված են կլոր, 2 սմ տրամագծով անցքեր։ Սափորաթասն ունի գեղեցիկ բևեռազարդ նախշերով և բազմանկյուն

նիստերով համաձույլ պատվանդան և դեպի վար ու վեր լայնացող հաղորդակից մեծ անցք։ Հավանաբար նրանում բորբոքվել է սրբազան կրակը։

Թեև ոչ համանման, սակայն Լճաշենից մեզ հայտնի են վազաներ, որոնք ունեն ձագարաձև տեսք և նրանց հետ որպես կանոն դրված են եղել տուփաձև քառանկյուն պատուհան-օդանցքերով անոթներ՝ զոհարաններ[6]։ Շնողում հայտնաբերված «հրաբորբոք վազաների» հետ զոհարաններ չկային։ Դրանք գերեզմանափոս էին դրված յուրաքանչյուրը մեկ կարասի, մեկ «ներճկված վազայի» հետ միասին. այս առումով էլ դրանք նորույթ են և արժանի ուշադրության։

«Ներճկված վազաները» երկարավուն, սև փայլաներկով, աստիճանաբար դեպի հատակը նեղացող, սեղանաձև տեսքով նավականման անոթներ են։ Համանման կավանոթներ հայտնի են հատկապես Լճաշենից[7]. սրանց մեջ կան նաև եռագույն ներկվածներ, այն տարբերությամբ, որ նրանց հատակը նեղ է, չունեն սեղանաձև տեսք։

Նշված երկու խմբերում կան նաև մեկական փոքր կարասներ։ Երկու կարասն էլ պատրաստված են բրուտագործական դազգահով։ Դրանցից առաջինը դորշ գույնի է, իսկ երկրորդը՝ կարմիր աղյուսագույն (նկ. 2ա, ե)։

Մյուս կավանոթներից 3-ը բարակ շուրթերով, գնդաձև, գորշավուն կավից պատրաստված, լայնաբերան փոքր կճուճներ են։ Դրանց պարանոցներն ունեն թույլ արտահայտված երկգիծ ալիքաձև զարդ (նկ. 2 ը, թ, ժ)։

10-րդ անոթը սև գույնի է, պարանոցն ունի ալիքաձև ակոսազարդ, որը գեղեցիկ տեսք է տալիս անոթին։

Մնացած 3 կավանոթներից մեկը սև գույնի է, երկուսը՝ կարմիր աղյուսագույն։ Երեքն էլ միևնույն չափսի են. ունեն բարակ շուրթեր, գնդաձև տեսք, լայնակոս փոսագծեր, հատակները կիսահարթ են (նկ. 2 գ, է, լ)։ Այս դամբարանում ուրիշ նյութեր և մարդու կմախքի մնացորդներ չհայտնաբերվեցին։ Դամբարանի ուղղությունն էր հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք։

№ 3 դամբարանի (կրոմլեխ) դամբանափոսն ուներ 1 մ լայնություն, 2,3 մ երկարություն, 1 մ խորություն։

70 սմ խորության վրա բացվեցին չորս խմբով դրված կավամաններ (նկ. 4)։ Առաջին խմբում կային 3 կավամաններ, որոնցից մեկը համաչափ լայնացող, նեղիրան գորշավուն կարաս է։ Նրա պարանոցը զարդարված է 8 ակոսագծերով, որոնք ընկած են գոտեպատ ակոսագծերի 8 սմ լայնությամբ հարթության մեջ։ Կարասի իրանի կեսից մինչև պարանոցը ծածկված է գեղեցիկ նախշազարդով։ Այն պատրաստված է բրուտագործական դազգահով։ Պատերը հաստ են, բավարար թրծված (նկ. 4 ժ)։

Այս խմբի մյուս կավամանները կարմիր գույնի քրեղաններ են՝ պատրաստված աղյուսագույն կավից։

Երկրորդ խմբի մեջ կային 3 կավամաններ՝ կճուճներ (նկ. 4 գ, դ, ե)։ Մեկը սև գույնի էր, լայն իրանով, նեղ վզով ու փոքր բերանով (նկ. 4 գ), իսկ մյուսը՝ կարմիր աղյուսագույն, լայնաբերան, կլորավուն, հաստ պատերով։ Սրա պարանոցի մոտ կան թույլ արտահայտված զույգ ակոսագծեր (նկ. 4 դ)։ 3-րդ անոթը լայնաբերան, կլոր քրեղան է, պատրաստված ձեռքով՝ կարմիր

---

[6] А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, աղյ. XXXIV—XI, նկ. 7։

[7] Նույն տեղում, նկ. 3 (ժամանակագրվում են մ. թ. ա. XIV դ.)։

աղյուսագույն կավից։ Այս անոթը բավականին նուրբ է. պարանոցին ունի զույգ զիգզագաձև նախշեր և ընդլայնակի անցնող երեք ակոսագծեր, որոնք երիզում են իրանի լայն մասը (նկ. 4 ե)։

Նկ. 3.

Նկ. 4.

Երրորդ խմբում, որը գտնվում էր այս խմբից հյուսիս՝ հյուսիս-արևմտյան պատի երկայնքով, կային 2 լայնաբերան սև գույնի անոթներ։ Առաջինը (նկ. 4բ) սև փայլանեղկով, 29 սմ բերանի փռվածքով բրուտագործական դազգահով պատրաստված անզարդ անոթ է, երկրորդը՝ (նկ. 4ա) կարմիր աղյուսագույն, հատակը նեղ, պարանոցի մոտ երեք ընդլայնակի ակոսագծերով անոթ է։

Չորրորդ խմբում, գերեզմանափոսի հյուսիս-արևելյան մասում կային 4 կավանոթներ։ Դրանցից մեկը բարձրարվեստ (նկ. 4զ), դրսի վրա փոքր-ինչ ետ դարձած կլոր շուրթերով լայնաբերան անոթ է։ Պարանոցով ընդլայնակի անցնում են զույգ ակոսագծեր։ Պարանոցից սկսած՝ կտրուկ նեղանում է։ Այս ձևով են պատրաստված Ղարաքոթուկից հայտնաբերված գրեթե բոլոր կովկիթները։ Պատրաստվել է բրուտի դազգահի վրա։ Երկրորդը նույնպես կովկիթ է (նկ. 4բ)։ Դատելով ամբողջական մնացած բեկորից, այն չափսերով և ձևով համընկնում է նկարագրված № 4զ կավանոթին, պատրաստված է կարմիր աղյուսագույն կավից։ Երրորդը աղյուսագույն լայնաբերան կովկիթ է (նկ. 4է), պարանոցի 3 ընդլայնակի ակոսագծերով։ Պատրաստված է բրուտագործական դազգահով։ Չորրորդը սև գույնի կովկիթ է։ Նրա իրանը հատում է նուրբ ու ճաշակով արված բարակ ակոսագիծը։

Այս դամբարանի չորրորդ խմբի կավանոթների տակից հայտնաբերվեց բրոնզե զարդասեղ։

Երկրորդ խմբի կավանոթներից մեկում (քրեղանի մեջ) գտնվեցին թրուշունի ոսկրերի և խիստ քայքայված քառակոսի նիստերով բրոնզե իրերի մնացորդներ։ Գերեզմանափոսի հատակից գտնվեց նաև օբսիդիանի կիսամշակ սրտաձև մի բեկոր։

Ինչպես այս, այնպես էլ մյուս դամբարաններում հողի հետ խառը կային ածխի մնացորդներ։

№ 4 դամբարանի դամբանափոսի եզրագծերի երկարությունն էր 4,17, լայնությունը՝ 1,1, խորությունը՝ 1—1,15 մ։ 60 սմ խորության վրա բացվեց վատ պահպանված կավամանների մի խումբ։

Կավանոթները դամբանափոսում դրված էին երկու խմբով։ Մեկը (6 կավամաններ) դրված էր հարավային ճակատաքարի տակ, մյուս խումբը՝ (5 կավանոթ) գերեզմանափոսի ուղիղ կենտրոնում։ Այս խմբի կավամաններից մեկը (քրեղան) գտնվեց բերանքսիվայր դիրքում։ Նրա շուրջը փռված էին բրոնզե 2 հերազարդեր և 12 ուլունքներ։ Կլոր հերազարդերը (12 սմ տրամագծով) պատրաստվել են հավանաբար կռելու եղանակով, 3 մմ հաստությամբ բրոնզե լարից։



Նկ. 5. Նկ. 6.

Ուլունքների մի մասը ագաթից է, իսկ մյուսները՝ սարդիոնից և շաղախից։ Կային նաև պղնձե կամ բրոնզե քայքայված ուլունքներ, օքսիդացած վիճակում։ Ագաթից ու սարդիոնից պատրաստված ուլունքները հավանաբար ծակվել են ավազով և անբավարար են հղկված։ Դրանց մեջ կան նաև կարմիր շաղախից պատրաստվածներ, որոնք համեմատաբար փոքր են։ Հավանաբար դրանք պատրաստվել են տեղի կարմիր կավահողից։ Գտնված կավանոթներից 6-ը կճուճներ են, 4-ը՝ քրեղաններ, իսկ մեկը՝ կաթ փռելու աման։

№ 4 դամբարանը տարբերվում է մյուսներից. դամբանափոսը երկար էր՝ 4,17 մ, իսկ մյուսներինը միջին հաշվով 2,3 մ էր, բացի այդ՝ այստեղ գտնվեցին համեմատաբար շատ ու բազմազան նյութեր՝ բրոնզե իրեր, ուլունքներ, կավամաններ և ոսկրի մնացորդներ։

№ 5 դամբարանի (կրոմլեխ) շրջանաքարերը լավ էին պահպանվել։ Այն ուներ 12 մ տրամագիծ։ Դամբանափոսում կար 7 կավաման, որոնցից մեկը աղյուսագույն, լայնաբերան, երկուսը՝ սև, խամրած փայլաներկով կճուճներ էին։ Թեև կճուճները ջարդված են, բայց չափագրվեցին (նկ. 5.)։ Կճուճներից

մեկի վիզը իրանի լայն մասի հետ կազմում է էլիպսազիծ և գեղեցիկ տեսք տալիս անոթին։ Վերնամասից այն կորագծով նեղանում է, նմանվելով անդրկովկասյան սակրի (նկ. 5ա)։ Մյուս կճուճը (նկ. 5բ) նման է առաջինին։ Դրանք պատրաստված են սև կավախմորից, բրուտագործական դազգահով։

Մնացած կավանոթներից երեքը լայնաբերան, կլոր, կարմիր աղյուսագույն, ոչ բավարար թրծված քրեղաններ են (նկ. 5 գ, դ, ե)։ Յոթերորդ անոթը լայնաբերան, հաստ պատերով, գորշ գույնի խիստ քայքայված կճուճ է։ Դամբանափոսի հատակից գտնվեց օբսիդիանի կիսամշակ տափակ բեկոր։

№ 6 դամբարանի գամբանափոսի ուղղությունը տարբերվում էր մյուսներից։ Այն ձգվում էր արևելքից արևմուտք։ Երկարությունն էր 2,25, խորությունն ու լայնությունը՝ 1,1 մ։ Դամբարանում կար 1 բրոնզե ապարանջան և 15 ուլունք։ Դրանց մի մասը ձևավոր է՝ պատրաստված գունավոր շաղախից և ոսկրանման սպիտակ նյութից։ Կային նաև սարդիոնից պատրաստվածներ։ Ուլունքների մի մասն ունի կիսատ կոնի, գլանի և ատամնավոր անիվի ձևեր։

Նկ. 7.

№ 7 դամբարանի ուղղությունն արևելքից արևմուտք էր. երկարությունն էր 1,5, լայնությունը՝ 0,8, խորությունը՝ 0,78 մ։ Դամբարանում հայտնաբերվեցին կիսաշարդված 4 կավանոթներ (նկ. 6), որոնք նման են նկարագրված մյուս անոթներին։

№ 8 դամբարանի արտաքին քարաշար շրջանի տրամագիծն էր 12 մ։ Կողոպտված էր և դամբանափոսում ոչինչ չհայտնաբերվեց, դամբարանի երկարությունն էր 2,3, իսկ խորությունը՝ 1 մ։

№ 9 դամբարանի ծածկի քարերի ծայրամասերից գտնվեցին 2 գործիքներ։ Դրանցից մեկը պատրաստված է կանաչ ֆերզիտից, իսկ մյուսը՝ ավազաքարից (նկ. 7 բ, ա)։

Դամբանափոսի երկարությունն էր 1,75, լայնությունը՝ 0,75 մ: Այն մաքրելուց հետո հայտնաբերվեցին ձեռքով պատրաստված 8 կավամաններ (նկ 8)։

Ինչպես այս, այնպես էլ մյուս դամբանափոսերում հայտնաբերված կավամանների զգալի մասը սև գույնի է։ Պարզվեց, որ դրանց շաղախը պատրաստելու ժամանակ կավախմորին խառնել են փայտածխի մուր կամ մանրացած փայտածուխ, որի հետևանքով կավամանները ստացել են սև գույն։

Կավամանների մեծ մասը ունի հաստ պատեր։ Ինչպես երևում է, կավանոթները պատրաստվել են տեղական հումքից։

№ 9 դամբարանում հայտնաբերվեցին նաև 2 գրեթե անշուրթ, գլանաձև բաժականման անոթներ։ Դրանցից մեկը, որի իրանագոտով անցնում է բարակ գիծ, պատրաստված էր սև կավից (նկ. 8 գ), իսկ մյուսը՝ կարմիր աղյուսագույն կավից (նկ. 8 է)։



Նկ. 8.

Նկ. 9.

Ինչպես այս, այնպես էլ մյուս դամբարաններում որպես կանոն հանդիպում էին փայտածխի մնացորդներ։ Արդյո՞ք այդ հանգամանքը չի վկայում դիակիզման սովորույթի մասին։

Մեծ Ուրթատեղի դամբարանադաշտում պեղվեց նաև 22 մ տրամագծով մեկ դամբարանաբլուր։ Տեղահան արված ծածկի քարերից երկուսն ընկած էին դամբարանաբլրի հարավային եզրի մոտ։ Դամբանափոսն ուներ 3,5 մ երկարություն, 1,25—1,35 մ լայնություն։

15 սմ խորության վրա հայտնաբերվեցին փայտածխի կտորներ և հաստ պատերով տաշտականման կավե հարմարանքներ (նկ. 9)։ Նրանք պատրաստված են կարմիր աղյուսագույն կավից և ունեն հաստ պատեր։ Զարդարված են կոպիտ նախշերով՝ բևեռներով, փոսիկներով, վերադիր նիստերով և այլն։ Կավե հարմարանքների մեջ, որոնք փաստորեն կրակարան օջախներ են, լցը-

ված էր ածխախառը մոխիր։ Դրանցից մեկը դրված էր դամբանափոսի արևմտյան ճակատից 90 սմ հեռավորության վրա, իսկ մյուսը՝ գերեզմանափոսի արևելյան ճակատապատի ձախ անկյունում։

Առաջին օջախի տրամագիծն է 75—80 սմ և դրված է քարերից պատրաստված պատվանդանի վրա։ Հավանաբար, կրակարանները թրծված չեն եղել, որովհետև բացելիս փշրվում էին։

Մյուս կրակարան օջախը առաջինից համեմատաբար փոքր էր և ուներ 65—75 սմ տրամագիծ։

Դամբարանի ծածկի քարերի մեջ գտնվեցին ավազաքարերից պատրաստված ձեռքի հատիչանման 2 կոպիտ գործիքներ, ինչպես նաև օբսիդիանի անմշակ բեկորներ։ Դամբարանը որոշակիորեն կապվում է կրակապաշտության, թերևս նաև դիակիզման սովորույթի հետ։

Շնող գյուղի Մեծ Ուրթատեղ կոչվող հնավայրի դամբարաններից հայտնաբերված ուշագրավ նյութերը հիմք են տալիս պնդելու, որ այս հնավայրի հետագա առավել հանգամանալից պեղումներով հնարավոր կլինի բացահայտել Հայաստանի այս հատվածի հնագույն շրջանի պատմության մի շարք դրվագներ։

ДРЕВНИЕ ПОГРЕБЕНИЯ НА ТЕРРИТОРИИ ШНОХА

В. В. АВЕТЯН

Резюме

На территории села Шнох Туманянского района (Мец Уртатех, Каракотук, Горер, Мирзакар, Кармир Гюх) в 1972 г. были обнаружены древние погребальные поля. Только на территории Каракотука было более 200 погребений, из них большинство типа кромлеха, есть малые и большие курганы, а также другие виды погребений.

В результате раскопок 10-ти погребений обнаружены богатая керамика, изделия и украшения из бронзы, бусы из сердолика, агата, лепки. Часть находок подобна материалам, выявленным Александром Ерицяном, Жак Морганом, Николаем Марром в разных районах Лори.

Новшеством являются «огневоспламеняемая» ваза и вогнутый с двух сторон сосуд.

Особого внимания заслуживает погребение в Мец Уртатехе, диаметром в 22 *м*, где были найдены глиняные круглые очаги, переполненные остатками пепла и угля, свидетельствующими о трупосожжении.

По предварительным данным найденных материалов раскопанные погребения можно датировать XIV—VII вв. до н. э.